




**ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ «ՀԱՅԱՍՏԱՆ»
ՀԱՄԵՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ՍՏԵՂԾՄԱՆ ԱՌԹԻԻ**

ԳԱՐԵԳԻՆ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՄԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԱՆՀԱՍԱՆԵԼԻ
ԿԱՄՕՔՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԸՆՏՐՈՒԹԵԱՄԲ ԱԶԳԻՍ
ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՀԱՅՈՑ ՄԵԾԻ ՏԱՆՆ
ԿԻԼԻԿԻՈՅ

ԸՆՈՐՀՔ, ՍԷՐ ԵՒ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ Ի ՏԵԱՌՆԷ ԵՒ ՈՂԶՈՅՆ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ Ի ՄԷՆԶ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՅԱԶՈՅ
ՍՐԲՈՅ ՀՕՐՆ ՄԵՐՈՅ ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱԽՈՐԶԻՆ

ԹԵՄԱԿԱԼ ՍՐԲԱԶԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՅ, ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ
ԵՒ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ, ՎԱՐԴԱՊԵՏԱՅ ԵՒ ՔԱՀԱՆԱՅԻՑ,
ԱԶԳԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՅ ԵՒ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ
ՎԱՐԶՈՒԹԵԱՆ, ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ, ՊԱՏԳԱՄԱԽՈՐԱԿԱՆ,
ԳԱԽԱՌԱԿԱՆ ԵՒ ԹԵՄԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ,
ԹԱՂԱԿԱՆՈՒԹԵԱՆՅ ԵՒ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆՅ,
ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆՅ ԵՒ ԾԱՌԱՅԻՑ ՀԱՅ
ԴՊՐՈՒԹԵԱՆ, ԴԱՍՏԻԱՐԱԿ ՈՒՍՈՒՅԶԱՅ ԵՒ ՄԱՄԼՈՅ
ՍՊԱՍԱԽՈՐԱՅ ԵՒ ՀԱՄՕՐԷՆ ՀԱԽԱՏԱՅԵԱԼ
ՀԱՐԱԶԱՏԱՅ ՄԵՐՈՅ ՀԱՅԿԱԶՆԵԱՆ ԱԶԳԻ ՈՐ Ի ՍՓԻԻՌՍ
ԱԾԽԱՐՀԻ.

ՔՐԻՍՏՈՍԱԽԱՆԴ ՍԻՐՈՅ ԵՒ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՈՂԶՈՅՆ
Ի ՄԷՆԶ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՅԱԶՈՅ ՍՐԲՈՅ ՀՕՐՆ ՄԵՐՈՅ
ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱԽՈՐԶԻՆ.

ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ ՀՕՐ ԱՍՏՈՒԾՈՅ, ՍԷՐ ՈՐԴԻՈՅՆ ՄԻԱԾՆԻ
ԵՒ ԸՆՈՐՀՔ ՀՈԳԻՈՅՆ ՍՐԲՈՅ ԵՂԻՑԻՆ ԸՆԴ ԶԵԶ ԸՆԴ
ԱՄԵՆԵՍԵԱՆԴ ԱՄԷՆ

Հոգեկան անհուն գոհունակութեամբ եւ հայրական ամենաջերմ սիրով
կ'ողողենք Ձեզի Հայրապետական այս Կոնդակը, որ իր տեսակին, տարո-
ղութեան եւ իմաստին ու արժէքին մէջ արտաքոյ կարգի նշանակութիւն ունի
Մեզ համար եւ, կը հաւատանք, պիտի ունենայ նաեւ Ձեզ համար, անխտիր:

Մեր Մայր Հայրենիքի՝ Հայաստանի Անկախ Հանրապետության հռչակումէն ետք այս առաջին Կոնդակն է, որ կ'ուղղենք մեր հաստատեալ ժողովուրդին, անոր կեանքին մէջ այլազան պատասխանատուութիւններ ստանձնած բոլոր անձերուն, հոգետրական թէ աշխարհական, եւ բոլոր ազգային-եկեղեցական համայնական կազմակերպութիւններուն, բոլոր մակարդակներու վրայ:

Քաջ գիտէք, որ մեր արդի պատմութեան մէջ լուսալից շրջան մը բացուեցաւ երբ 1918-ի Մայիսի 28-ին հռչակուած եւ երկամեայ կեանքէ ետք բռնատիրական վարչակարգէ մը անարդարօրէն խափանուած Հայաստանի Հանրապետութիւնը վերածնաւ 1990 Օգոստոսի 23-ին նոր հռչակմամբ եւ համազգային կամքի միահամուռ, վճռական եւ սխրալից արտայայտութեամբ:

Եօթանասուն տարիներու համայնատիրական կաշկանդիչ վարչակարգի մը մեր հայրենական ժողովուրդին պարտադրած տառապանքէն ետք, Հայոց ազգը ի Մայր Հայաստան եւ ի ծագս աշխարհի, կրակին մէջէն անցած ոսկի մետաղին հանգոյն իր ազատութեանը մէջ վերակենդանացաւ հոգետրապէս եւ ազգայնօրէն վերաբիրեղացեալ պատկերով, «նորափետուր զարդարեալ», իր ինքնութեան եւ արժանապատուութեան շեշտեալ հոգեբանութեամբ:

Ձեր բոլորին ծանօթ իրողութիւն է, որ Հայաստանի Հանրապետութիւնը այժմ կ'անցնի ծլարձակումի եւ արմատացումի ճակատագրականօրէն վճռական օրերու մէջէն: Հոգետր, տնտեսական, քաղաքական, ընկերային, կրթական, մշակութային վերականգնումի հրամայականին տակ՝ ան կը դիմագրաւէ բազում տեսակի դժուարութիւններ, հարցեր եւ տագնապներ: Անմիջական եւ անյետաձգելի կարիքն ունի իր բոլոր զաւակներուն ամբողջանուէր, անվերապահ, ներդաշնակ եւ զոհաբերական աջակցութեան:

Մեր Հանրապետութեան ազգընտիր Նախագահը՝ Լեւոն Տէր-Պետրոսեան, յանուն մեր անկախ պետութեան, հրամանագիր է հանած, ամսոյս՝ Մարտի 3 թուականով, յայտնելով համայն հայ ժողովուրդին, որ որոշած է հիմնել Համահայկական Հիմնադրամ մը «ՀԱՅԱՍՏԱՆ» պարզ ու յանկուցիչ անուան տակ, «Հայ ազգի հնարաւորութիւնների ու կարողութիւնների համախումբ գործադրմամբ» օգնելու Հայաստանի վերաշինման եւ զօրացման, կայուն եւ տոկուն հիմքերու վրայ դնելու երկրի տնտեսութիւնը, յաղթահարելու համար 1988 7 Դեկտեմբերի երկրաշարժի յառաջ բերած չարաղէտ հետեւանքները, զօրավիգ կանգնելու Արցախի հայ ժողովուրդին, անոր լինելութեան վճռական եւ ճակատագրական տագնապալից այս օրերուն, եւ առհասարակ աջակցելու Հայաստանի հայ ժողովուրդի կեանքի վերականգնման հայող համապետական ծրագիրներու իրականացման:

Արդար նախանձախնդրութիւն, ազնուական գաղափար եւ ներբողելի առաջադրութիւն: Վստահ ենք որ որեւէ հայ, ո՛ր ալ ըլլայ, ի՛նչ պայմաններու տակ ալ որ ապրի, չի կրնար չհոգետրուիլ այս հայրենաշէն նախաձեռնութեամբ ու չխանդավառուիլ այս ազգակերտ նպատակով: Ո՛վ է ազգը, ի՛նչ է հայրենիքը: Մե՛նք ենք՝ մեր սրբազնացեալ հողով, մեր արիւնով, մեր քրիստոնէական հաւատքով, մեր մայրենի լեզուով, մեր քրտինքով, ոգորումներով եւ մանաւանդ այս բոլորին մեր բերած անհատական, անձնական մասնակցութեամբ: Օգնել հայրենիքին, մասնակցիլ մեր անկախացեալ ազգի Հանրապետութեան վերակերտումին, չի նշանակեր տալ ուրիշին: Սա սովորական իմաստով մարդասիրական, գթասիրական—ինքնին

ալլապէս ազնիւ—արարք չէ: Սա մեր Հանրապետութեան անկախութեան գոյատեւման, առողջ տուեալներու վրայ յառաջացման նուիրականագո՛յն գործն է:

Հայրենիքը մեզմէ իրաքանչիւրին եւ մեր բոլորին եղածին, ունեցածին եւ գործունէութեան հաւաքական հասցէատունն է: Այո՛, մեր բոլորի հարըստատունը, ուր մեր կատարած ներդրումները զայն կը վերածեն կենսատունի: Չմոռնանք, ինչ որ ենք այսօր՝ որպէս ազգ համայնական մեր գոյութեամբ՝ մեր հայրերու ներդրումներուն «արութեան գործ»երու համահաւաք ժառանգութիւնն է, որով այնքան կը հպարտանանք: Եւ ինչ որ վաղը պիտի ըլլանք՝ այսօրուան մեր ընծայաբերութեանց ոյժովն է որ պիտի իրագործուի եւ որպէս այդ ճանչցուի ապագայ սերունդներուն կողմէ: Պատմութիւնը Աւետարանի այն գանձանակն է, որուն առջեւէն կ'անցնի ամէն մարդ. եւ՝ մարդուն արժէքը կը չափուի իր տուածին որակային տեսակովն ու քանակային չափովը, այրի կնոջ լումային նմանատիպովը:

Ահա թէ ինչ զգացումներով եւ խոհերով Մենք այս Կոնգակը որպէս հայրական ամենաջերմ կոչ կ'ողողենք Կիլիկեան դարաւոր Ս. Աթոռի բոլոր զաւակներուդ, բոլոր թեմերուն մէջ, հրաւիրելով ձեզ բոլորդ, մեծ ու փոքր, այր թէ կին, հարուստ թէ ոչ հարուստ, որ իրացնէք, ձեր սեփական մտածումին, ջանքին եւ նուիրումին խառնէք մասնակցութեան կամքը, ձեր կարողութեան գերագոյն աստիճանով, եւ ձեր սիրոյն լիագոյն արտայայտութեամբք: Ով որ ինքզինքը հայ կը զգայ չի կրնար անմասն մնալ այս համազգական պարտաւորութենէն, որ բացառիկ իմաստ եւ կենսական կարեւորութիւն ունի ա՛յժմ, ներկա՛յ ժամանակներուն, ա՛յս օրերուն, երբ հայրենիքը կարիքն ունի հաստատունացման եւ աճումի, բարեփոխութեանց եւ զարգացումի, հասարակական կեանքի բոլոր մակարդակներու վրայ: Բաւական չէ Անկախ Պետութիւն հռչակելը: Անհրաժեշտ է պետութեան անկախութիւնը պահպանելը եւ արժեցնելը: Աշխարհն ամբողջ մեզ կը դիտէ: Մեր արժանիքներու իրաւութեան եւ մեր արժէքի փաստարկութեան ժամանակն է այս: ՀԱՅԱՍՏԱՆ անունը միջազգային կազմակերպութեանց մէջ արձանագրելը գեղեցիկ իրագործում է. բայց գեղեցկագոյնն է անոր պատուաբեր պահպանումը եւ զայն շարունակական, մնայուն յարգանքի արժանի դարձնելու պարտքը:

Ազգ մը, հայրենիք մը, եկեղեցի մը ամէն բանէ առաջ եւ վեր՝ իր սեփական, իրայատուկ ներքին ոյժերով, կարողականութիւններով եւ իր անդամներու նուիրաբերութեամբ ու զոհողութեամբ կը մնայ առողջ եւ անսասան ու յառաջադէմ: Ո՛չ մեկ արտաքին ոյժ եւ օգնութիւն իր ամբողջական իմաստը եւ բարերար արժէքը կը գտնէ առանց այդ ներքին ազգային ինքնեկ առողջութեան եւ զօրութեան: Մարմնին ներքին դիմացկունութիւնը առողջութեան, ապահովութեան, երկարակեցութեան, ստեղծագործականութեան եւ երջանկութեան, նախապայմանն է: Այդ դիմացկունութիւնը ձեռք կը բերուի մարմնի անդամներուն սերտ իրերահաղորդութեամբք: Եւ, Մեզ համար, համահայկական ազնւագոյն եւ պատուաբեր այս ծրագրի իրագործումին բարիքները անսահման են նաեւ ի խնդիր մեր ժողովուրդի միասնութեան եւ ամբողջականութեան գաղափարին եւ գործնական ապրումին ջրդեղումին, ողջ Հայութեան ստեղծագործական ու յաղթական երթին համար:

Ուստի, կը յորդորենք մեր հաւատացեալ եւ սիրեցեալ ժողովուրդը՝ յօժարական պատրաստականութեամբ, առատաձեռնութեամբ ընդառաջել հայ-

րենիքի ձայնին, որպեսզի մեր օրերու պատմությունը կերտուի որպես լուսաշող մէկ օղակ, անցեալի փառքը ապագայի տեսիլքին առնչող շքեղ վկայութիւն:

Ողջ լերուք ո՛ր Տէր, զօրացեալք շնորհօք Սուրբ Հոգւոյն, եւ յաւետ օրհնեալ ի Մէնջ. Ամէն:

ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

Տաաւ Կոնդակս ի Կաթողիկոսարանիս

Ի դուռն Մայր Տաճարիս Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին

Որ յԱնթիլիաս, Լիբանան

Ի 17-ն Մարտի, 1992 թուին Քրիստոսի, եւ

Ի թուին Հալոց ՌՆԽԱ.

Ընդ Համարաւ Վ/ԾԾԲ

